

Երեմիա Չէլէպի իր Վ.Պոլսոյ Պատմութեան մէջ (գրուած 1661—84, Հրտ. Տր. Վ. Թորգոմեանի, «ՀԱ.՛ի անցեալ տարւոյ մէջ») կը յիշատակէ՝ թէ Ստամպոլի Նառլը Գափուի դուրսը (ներսը կը բնակէին Հայերը), «Մէյխանէք ԱրիՖներաց» (°) կային, որոնք Երեմիայի Ժամանակ արդէն խափանուած էին: Ստամպոլի քահանաներ (անշուշտ Հակառակորդներ) տեղացի Յովհ. Խուլը, որ բնութեամբ բուռն (յանդուգն, ձեռներէց) էր, նենգութեամբ այնտեղ առաջնորդած են անցընելով Մէյխանէէն (ընդ մէյխանան), եւ Եէնիչէրի աղասիին ծեծել տուած են, որ միջոցին Յովհ. կ'աղաղակէր՝ թէ ինք չէր գիտեր այս տեղւոյն ինչ ըլլալը: Գէպքիս տարին անծանօթ է, սակայն անտարակոյս Պատրիարքութեան օրերը հանդիպած չէ: Ահա բնագիրը՝

Տէրտէրքն Խտամպոլոյ՝ հնարիք՝ տարեալ ընդ մէյխանան,

Չխուլ Յովհաննէս վարդապետն՝ զտեղացին, ի բարս շամբշական:

Յանկարծ եէնիչէր աղայն՝ երբ կոխէ՝ տէրտէրքն փախեան.

Չվարդապետն առնեն բրածեծ՝ տեղեակ չեմ տեղւոյս, նա՛ գոչման:

Գաւազանագրքեր կը նշանակեն՝ իբր թէ Յովհ. 1631—36 չորրորդ անգամ Վ.Պոլսոյ Պատրիարք եղած ըլլայ: Ասիկայ բոլորովին սխալ է, ինչպէս հիմայ կը տեսնենք: